# ԳԻՐՔ ՆՎԻՐԵԼՈՒ ՕՐԸ ԱրՊՀ-ՈՒՄ



***Փետրվարի 19-ին Արցախի պետական համալսարանի գիտական գրադարանում նշվեց ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ծննդյան և գիրք նվիրելու օրը: Միջոցառումը կազմակերպվել է ԱրՊՀ գիտական գրադարանի, ԼՀԿ բաժնի և բանասիրական ֆակուլտետի ուսանողների նախաձեռնությամբ:***

Ներկաներին ողջունել է գիտական գրադարանի վարիչ Հասմիկ Հարությունյանը` նշելով, որ գիրք նվիրելը միշտ էլ հաճելի է:

«Օրն առիթ է` գիրքը մեկ անգամ ևս արժևորելու, գիրք-ընթերցող կապն ամրապնդելու: Գիրքը հոգևոր և մշակութային արժեք է, որը պետք է պահպանենք»-նշել է նա:

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, բանաստեղծ, թարգմանիչ, գրականագետ Սոկրատ Խանյանը պատահական չի համարում ամենայն հայոց բանաստեղծի ծննդյան օրը գրքի նվիրաբերմամբ նշանավորելու խորհուրդը. «Ոչ մի հայ գրող, մշակույթի ներկայացուցիչ չի կարող հավասարվել Հ. Թումանյանին, որովհետև նրա աստվածային տաղանդը անուրանալի է: Մեր քերթության Արարատը Թումանյանն է»:

«Հայոց գիրը ոչ միայն այսօր, այլև բոլոր ժամանակներում որպես մարտիկ դիրքերում կանգնած է: Երբ զորքին չի հաջողվել պաշտպանել հայրենիքը, ապա դա հաջողվել է գրին, մշակույթին»,-ասել է բ.գ.թ., դոցենտ Զինաիդա Բալայանը:

«Հայ գրքի և գրականության միջոցով կարող ենք հային հայ պահել ամենուր և բոլոր կարգավիճակներում: Գիրք նվիրելու և Հ. Թումանյանի ծննդյան օրը հայապահպանության, հայկական արժեքների ամրապնդումը խորհրդանշող օրերից մեկն է»,-ասել է բ.գ.թ., դոցենտ Զարինե Սառաջյանը:

«Օրը առանձնահատուկ խորհուրդ ունի, որովհետև այն ազգը, որը արժևորում է գիրք նվիրելը ու առանձին տոն դարձնում այն, դարերի բոլոր փորձություններին կդիմակայի և նոր արևաշող օրեր կունենա»,-նշել է գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնի վարիչ, բ.գ.թ. Նոնա Դավթյանը:

Օրվա խորհրդին հավատարիմ` իրենց հեղինակած գրքերից գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնի դասախոսները նվիրեցին գրադարանին և ուսանողներին:

# ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ՝ ԳԻՐՔ ՆՎԻՐԵԼՈՒ ՏՈՆԻՆ

***Գիրք նվիրելու օրը ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետում նշանավորվեց գիրք նվիրելով, իսկ պատմության և իրավագիտության ֆակուլտետում` ինտելեկտուալ խաղով:***

«Գիրք նվիրելու օրը բազմախորհուրդ է: Հիշենք, որ գիրք նվիրելով` ինքներս մեզ և մեր շրջապատին նվիրում ենք հոգևոր հաղորդակցման հաճելի րոպեներ»,- նշեց բանասիրական ֆակուլտետի ՈՒԽ նախագահ Ինեսսա Առուստամյանը` կարևորելով գրքի արժեքը և շնորհավորելով բոլոր ընթերցասեր ուսանողներին:



«Խաղի հիմնական նպատակն էր բարձրացնել ուսանողների իրազեկվածության աստիճանը, հնարավորություն տալ ավելի լայն մտահորիզոն ունենալու: Նմանօրինակ խաղերը նաև ինչ-որ չափով աշխուժացնում են ուսանողների առօրյան»,- իր խոսքում նշել է պատմության և իրավագիտության ՈՒԽ նախագահ Արա Սարգսյանը` հավելելով, որ նման բնույթի միջոցառումների կազմակերպումը շարունակական կլինեն:



«ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ամսաթերթ

*Հիմնադիր` «ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ*

Հրատարակվում է 1994 թվականից

Խմբագիր` Զ. Սառաջյան

Մեր հասցեն` Մ.Գոշի 5: Հեռ.` (047) 94 04 91

Տպաքանակ` 400

Տպագրվում է Արցախի պետական համալսարանի հրատարակչության տպարանում

Իմացի՛ր քո համալսարանի մասին:

Այցելի՛ր asu.am կայք:

www.asu.am

# ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄՍԱԹԵՐԹ - ЕЖЕМЕСЯЧНАЯ ГАЗЕТА «АРЦАХИ АМАЛСАРАН»

*№ 01(229)*

*հունվար-փետրվար, 2021*

# ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԻ ՓՈԽԱՐԵՆ

*Հարգելի՛ գործընկերներ, սիրելի՛ ուսանողներ*

*Ապրելու, արարելու և աշխարհը ավելի լավը դարձնելու կամքը հային բնորոշ է ի բնե: Այսօր առավել, քան երբևէ, այդ որակները գերակա են մեզնից յուրաքանչյուրի գիտակցումի մեջ ու աշխատանքներում: Դրա վկայությունն է նաև պատերազմից դեռ չապաքինված վերքերով Արցախի պետական համալսարանում ուսումնական գործընթացի վերսկսումը: Ցավոք, պատերազմի պատճառով մեր բուհը ևս ունեցավ անդառնալի կորուստներ: Մեր տասնյակ ուսանողներ հանուն հայրենիքի և հայ ժողովրդի անվտանգության դարձան հավերժի ճամփորդներ: Փառք ու պատիվ, հավերժ խոնարհում նրանց: Մեր ժողովրդի համար այդ ծանր օրերին ԱրՊՀ բազմաթիվ ուսանողներ և դասախոսներ առաջնագծում ու թիկունքում իրենց նպաստն են ունեցել հայրենիքի պաշտպանության սուրբ գործին: Շնորհակալություն բոլորիդ:*

*Անցնող տարին կրթական ոլորտում մեր նախանշած անելիքների փոխարեն սեփական հողում անվտանգ ապրելու մարտահրավերը հաղթահարելու հրամայական դրեց բոլորիս առջև` փոխելով առաջնահերթությունները: Եվ այսօր էլ բոլորս միասին այդ մարտահրավերը հաղթահարելուն զուգահեռ շարունակում ենք կրթական ոլորտի խնդիրները լուծելու, մասնագետներ կրթելու մեր առաքելությունը:*



*Սեպտեմբերի 27-ին սանձազերծված կյանքի և մահվան պայքարի արդյունքում, որքան էլ վիրավոր, բայց հաղթեց կյանքը, այսօր ապրում է Արցախի պետական համալսարանը, իսկ ապրեցնողները մեզնից յուրաքանչյուրն է, դո՛ւք եք, սիրելի՛ ուսանողներ և դասախոսներ:*

*Մաղթում եմ, որ նոր տարում այլևս ոչ մի դաս կիսատ չմնա պատերազմի պատճառով, ոչ մի ուսանող կիսատ չթողնի ուսումը` զենքը ձեռքին ռազմադաշտ մեկնելու համար: Թող այսուհետ համալսարանականները սխրանքներ արձանագրեն կրթության, գիտության ոլորտում և խաղաղ պայմաններում: Բոլորիդ մաղթում եմ առողջություն, անվտանգ ու բարեկեցիկ կյանք: Խաղաղություն բոլորիդ ընտանիքներին:*

*ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյան*

# ԱՀ ՆԱԽԱԳԱՀԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է ԱրՊՀ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԻ ՀԵՏ



***Արցախի Հանրապետության Նախագահ Արայիկ Հարությունյանը հունվարի 20-ին նախագահական նստավայրում հանդիպել է Արցախի պետական համալսարանի գիտական խորհրդի անդամների հետ:***

Հանդիպումն անցել է հարցուպատասխանի ձևաչափով, որի ընթացքում երկրի ղեկավարը պատասխանել է ԱրՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի կողմից հնչած հարցերին` անդրադառնալով նախապատերազմյան, պատերազմական իրողություններին, հետևանքներին, անվտանգությանը, քաղաքական, սոցիալ-տնտեսական և մյուս ոլորտներին, դրանց զարգացման տեսլականին ու անելիքներին:

Անդրադառնալով Արցախի պետական համալսարանի ուսանողների ուսման վարձավճարների հարցին` երկրի ղեկավարը հայտարարել է, որ ԱրՊՀ բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման համակարգերում սովորող բոլոր ուսանողների 2020-2021 ուսումնական տարվա վարձավճարները կփոխհատուցի Արցախի Հանրապետության Կառավարությունը:

ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը շնորհակալություն է հայտնել նախագահ Ա. Հարությունյանին` հանդիպումը համարելով սպասված և անհրաժեշտ:

# ԱրՊՀ Է ԱՅՑԵԼԵԼ ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐ ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆԸ



***Փետրվարի 22-ին ԱրՊՀ է այցելել ՀՀ ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանը և հանդիպում ունեցել Արցախի Հանրապետությունում գործող բուհերի ներկայացուցիչների հետ:***

***ՀՀ ԿԳՄՍ նախարարին ուղեկցում էին ԱՀ ԿԳՄՍ նախարար Լուսինե Ղարախանյանը, ՀՀ ԿԳՄՍՆ Գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանը:***

Ողջունելով ներկաներին` ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը շնորհակալություն է հայտնել ՀՀ ԿԳՄՍ նախարարին` ԱրՊՀ այցելելու և իր գործունեությամբ Արցախի մայր բուհին գործուն աջակցություն ցուցաբերելու համար: Ռեկտորը ներկայացրել է համալսարանի անցած ուղին, ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացքը, պատերազմից հետո ի հայտ եկած խնդիրներն ու դրանց լուծմանն ուղղված քայլերը:

«Հաճելի է գտնվել Արցախի պետական համալսարանում` վաղուց կայացած մի բուհում, որը ոչ միայն կրթական առաքելություն է իրականացնում, այլ նաև` պետական մի շարք կարևոր ուղղություններով»,-իր խոսքում նշել է ՀՀ ԿԳՄՍ նախարար Վ. Դումանյանը` հավելելով, որ ներկայիս իրավիճակում պետք է կարևորվի Արցախի պետական համալսարանի` որպես երկրի մայր բուհի գոյությունն ու անհրաժեշտությունը:

«Պետք է ամեն ինչ արվի, որպեսզի ԱրՊՀ-ն զարգանա: Մենք պատրաստ ենք դրսևորել մեր բոլոր միջոցներն ու ջանքերը այդ գործում, մենք պատրաստակամ ենք»,-ընդգծել է Վ. Դումանյանը:

ՀՀ ԿԳՄՍՆ Գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանը խոսել է գիտական մրցույթների ու թեմաների, միջազգային պարբերականներում գիտական աշխատանքների տպագրության և հարակից այլ հարցերի շուրջ` նշելով միջազգային հեղինակություն ունեցող պարբերականներում Արցախի գիտնականների կողմից գիտական հոդվածների տպագրության անհրաժեշտությունն ու կարևորությունը:



«Կրթությունն ու գիտությունն այն ոլորտներն են, որոնց միջոցով փափուկ ուժով կարելի է առաջ տանել Արցախի ճանաչման գիծը»,-ասել է Ս. Հայոցյանը:

ՀՀ ԿԳՄՍ նախարարը պատասխանել է ներկաների հարցերին, որոնք վերաբերում էին բարձրագույն կրթության մասին նոր օրենքին, բարձրագույն կրթության կազմակերպմանը, գիտական ատենախոսությունների պաշտպանությանը և այլն:



# «ԱՅՍՕՐ ՄԱՅՐԵՆԻՆ ԱՅՆ ՄԻԱԿ ՀԶՈՐ ՈՒԺՆ Է, ՈՐՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ՄԵՐ ԱՇԽԱՐՀԱՍՓՅՈՒՌ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ»



***Փետրվարի 21-ը նշվում է որպես մայրենի լեզվի միջազգային օր: ԱրՊՀ- ում օրը նշանավորվեց միջոցառմամբ, որը նախաձեռնել էր բանասիրական ֆակուլտետի ակադեմիկոս Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնը: Ողջունելով ներկաներին և շնորհավորելով տոնի առթիվ` ամբիոնի վարիչ, բ.գ.թ., դոցենտ Հասմիկ Ղազարյանը կարևորել է օրվա խորհուրդը:***

«Այսօր մայրենին այն միակ հզոր ուժն է, որն ապահովում է մեր աշխարհասփյուռ հայության միասնությունը, հանուն որի մենք դարեր շարունակ քայլել ենք դեպի ապագա: Մենք մեր ողջ գիտակցական կյանքի ընթացքում պիտի պայքարենք մեր լեզվի պահպանման և անաղարտության համար»,-նշել է նա:

Միջոցառման ընթացքում ուսանողները մայրենի լեզվին ձոնված բանաստեղծություններ են ասմունքել` ելույթներում կարևորելով մայրենի լեզվի դերը ազգապահպանման գործում:

«Լեզուն մեր ազգի օրհասական օրերի հենարանն ու գոյության առհավատչյան է: Լեզուն է գլխավոր երակը, որն իր հզորությամբ անհաղթելի է ժամանակի և վերջինիս ծնած պարգևի դեմ», - ասել է ուսանողուհի Տաթևիկ Ղահրամանյանը:

Մայրենի լեզվի միջազգային օրվա առթիվ ակադեմիկոս Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնը հայտարարել էր «Լավագույն ստեղծագործող» և «Լավագույն ասմունքող» մրցույթը: «Լավագույն ասմունքող» անվանակարգում 1-ին տեղը զբաղեցրել է Լինա Միրզոյանը, 2-րդը` Անուշ Պետրոսյանը, 3-րդը` Անահիտ Հովհաննիսյանը:

«Լավագույն ստեղծագործող» անվանակարգում 1-ին տեղն է զբաղեցրել Տաթևիկ Ղահրամանյանը, 2-րդը` Ասպրամ Ավանեսյանը:

Մրցույթներում հաղթողները ամբիոնի կողմից պարգևատրվել են պատվոգրերով:

# ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԵՆ ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ 33-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԵՐԹԻՆ

***Փետրվարի 20-ին Ստեփանակերտում կազմակերպվել է Արցախյան շարժման 33-րդ տարեդարձին նվիրված երթ, որին մասնակցել են նաև համալսարանականները` ռեկտոր Արմեն Սարգսյանի գլխավորությամբ:***




Համալսարանականներն այցելել են նաև զինվորական պանթեոն և հարգանքի տուրք մատուցել հայրենիքի պաշտպանության համար զոհվածների հիշատակին:

1988 թ. վերազարթոնք ապրած մեր ժողովրդի կամքն ու ոդեգրած սկզբունքներն այսօր էլ ապրում ու կենսունակ են Արցախի երիտասարդության մեջ: 33 տարի առաջ ամեն ինչ սկսվել էր մայր համալսարանից և ուսանողների կողմից: Այսօր Արցախը նորից հայտնվել է մի իրավիճակում, երբ կրկին գաղափարի դրոշը բարձր պահելու առաքելությունը ուսանողության, ասել է թե` երիտասարդության ձեռքերում է: Արցախը կապրի` ի դեմս գաղափարի դրոշը ամուր պահող երիտասարդների:

# ԱրՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ԳԱՆՁԱՍԱՐԻ ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼ ԵՆ ՄՈՄԱՎԱՌՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ԱՐՑԱԽԻ ՎԵՐԱԾՆՄԱՆ



*Փետրվարի 14-ին ԱրՊՀ շուրջ 150 ուսանող այցելել է Գանձասարի վանական համալիր: Նախաձեռնությունը կյանքի կոչվեց բուհի ղեկավարության, ՈւՀՏԱ և Կ բաժնի, ինչպես նաև ՈւԽ համատեղ ջանքերով: Օրը նշանավորվեց նաև Հայ առաքելական եկեղեցու կողմից նշվող Տյառնընդառաջի տոնով:*

Ուսանողները մասնակցեցին եկեղեցում մատուցված պատարագին, կատարեցին մոմավառություն հանուն հայրենիքի ընկած քաջորդիների հոգիների փրկության, Արցախ աշխարհի վերածնման և հարատև խաղաղության հաստատման:

«Ի հեճուկս մեր արժեքները սեփականաշնորհել ցանկացողների՝ Գանձասարի մայր տաճարում հավիտյան պետք է բարձրանա մեր միաձայն աղոթքը, իսկ Արցախն ու Հայաստանը պետք է հասնեն համազգային նպատակներին»,- նշել է ՈւԽ փոխնախագահ Կարեն Մարտիրոսյանը՝ հավելելով, որ Գանձասարից վերադարձել են հոգեպես լիացած և հավատով, որ Արցախը ոտքի է կանգնելու, և ուսանողներն էլ դառնալու են այդ սրբազան գործի մասնակիցը:

Օրվա ընթացքում ուսանողները հնարավորություն ունեցան նաև կիսվելու տպավորություններով, նպատակներով ու հետագա անելիքներով:

Մասնակիցները շնորհակալություն են հայտնել կազմակերպիչներին՝ հույս հայտնելով, որ նման այցերը շարունակական բնույթ կկրեն:

# ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

*Հունվարի 22-ին Արցախի պետական համալսարանի հեռակա ուսուցման համակարգում սովորող ուսանողների հետ հանդիպում է ունեցել ՈՒՇՀՀՏԱԳ պրոռեկտոր Վ. Յարամիշյանը:*



Հանդիպմանը ներկա էին տարբեր մասնագիտություններով սովորող ուսանողներ, ովքեր ծանոթացել են համալսարանում ուսանողների հետ տարվող աշխատանքների գծով համապատասխան ստորաբաժանումներին և դրանց գործունեությանը, իրազեկվել, թե ինչպես կարող են ստանալ իրենց հուզող հարցերի պատասխաններն ու հանդես գալ առաջարկություններով:

Պրոռեկտոր Վ. Յարամիշյանը ուսանողներին ներկայացրել է նաև համալսարանի միջազգային հավատարմագրման ընթացքի և հեռավար ուսուցման էլեկտրոնային հարթակի հնարավորությունների մասին:

Ուսանողները հնչեցրել են իրենց հուզող հարցերը, քննարկել հեռակա ուսուցման համակարգին վերաբերող, հեռակայից առկա ուսուցման համակարգ տեղափոխվելու ընթացակարգը և մի շարք այլ հարցեր:



# ԿԱՅԱՑԵԼ Է ԱրՊՀ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

*Փետրվարի 17-ին տեղի է ունեցել ԱրՊՀ գիտխորհրդի նիստ, որին մասնակցում էր նաև ԱՀ ԿԳՄՍ նախարար Լուսինե Ղարախանյանը: ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը ներկայացրել է գիտխորհրդի կազմում փոփոխություն կատարելու մասին հարցը, ըստ որի՝ գիտխորհրդի կազմում ընդգրկվել են նոր անդամներ դասախոսական կազմից և ուսանողական կառույցներից:*



Օրակարգի հաջորդ հարցով գիտխորհուրդը քննարկել և հաստատել է հեռավար ուսուցմամբ ուսումնական գործընթացի կազմակերպման կարգը, որը ներկայացրել է բանասիրական ֆակուլտետի դեկան Լ. Մարգարյանը:

Գիտխորհուրդը քննարկել և հաստատել է նաև բակալավրիական կրթական ծրագրի կամընտրական դասընթացի կազմակերպման կարգը, բակալավրիատի 2021-2025 ուսումնական տարվա / մաթեմատիկա-ֆիզիկա, կենսաբանություն-քիմիա/ առկա և 2021-2026 /ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա/ ուսումնական տարվա հեռակա ուսուցման համակարգերի ուսումնական պլանները, դասախոսի պորտֆոլիո-ն հաստատելու մասին հարցը:

Գիտխորհուրդը լսել է նաև տեղեկատվություն ԱրՊՀ հավատարմագրման գործընթացի նախապատրաստական աշխատանքների, հեռակա ուսուցման համակարգի առաջին կիսամյակի ուսումնական գործընթացի արդյունքների ամփոփման մասին:

ԱՀ ԿԳՄՍ նախարար Լ. Ղարախանյանը, խոսելով անելիքների մասին, նշել է, որ նախատեսվում է առաջիկայում շեշտը դնել բնագիտական ուղղվածության մասնագիտությունների զարգացման վրա: Նախարարը համալսարանականներին հորդորել է նաև գիտական աշխատանքներն ու թեմաներն ընտրելիս հաշվի առնել ժամանակի պահանջներն ու մարտահրավերները:

Այլ հարցերում գիտխորհուրդը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ դասախոսների ուսումնամեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, գիտահետազոտական աշխատանքներ:

# ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ «ԱՐՑԱԽԻ ԺՈՂՈՎՐԴԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ» ՄԱՏԵՆԱՇԱՐԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՏՈՐԸ




*Արցախի պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ տպագրվել է «Արցախի ժողովրդագիտությունը» մատենաշարի երրորդ հատորը՝ «Արցախի ժողովրդագիտությունը. Ազգագրություն»՝ աշխատասիրությամբ և ընդհանուր խմբագրությամբ բ.գ.թ., դոցենտ, ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ Արմեն Սարգսյանի:*

«Արցախի ժողովրդագիտությունը» մատենաշարը, որը հիմնադրվել է Արցախի պետական համալսարանի գիտխորհրդի որոշմամբ և նվիրվում է մայր բուհի հիմնադրման 50-ամյակին, ընդգրկում է Արցախի ժողովրդագիտության երեք բնագավառներին՝ ազգագրությանը, բանահյուսությանն ու բարբառին վերաբերող և առնչվող այն հիմնական ուսումնասիրությունները, աշխատությունները, ժողովածուները, հոդվածները, գիտական զեկուցումները, ճանապարհորդական նոթերը, հուշագրությունները և այլ նյութերը, որոնք գրառվել ու հրատարակվել են հայ և օտարազգի տարբեր ազգագրագետների, բանագետների ու բանահավաքների, բարբառագետների, այլ բնագավառների գիտնականների, հասարակական ու եկեղեցական գործիչների, ճանապարհորդների, գրողների, Շուշի քաղաքի և որոշ գյուղերի ուսումնական հաստատությունների ուսուցիչների ու տեսուչների կողմից 19-րդ դարի կեսերից առ այսօր: Յուրաքանչյուր բնագավառին վերաբերող առաջին հատորի առաջաբանում տրվում է տվյալ բնագավառի ուսումնասիրության պատմությունը, իսկ եզրափակող հատորի վերջում՝ ամբողջական մատենագիտական ցանկը: Նյութերը ներկայացվում են որոշակի խմբագրությամբ և սրբագրությամբ (բացառությամբ բարբառով գրառված նյութերի)՝ համապատասխանեցնելով ուղղագրության ու տառադարձության արդի սկզբունքներին:

Մատենաշարի երրորդ՝ սույն հատորում ընդգրկված են հետխորհրդային շրջանում կատարված՝ Արցախի ազգագրությանը վերաբերող ուսումնասիրությունները:

# ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ Է ՄԱՏՈՒՑՎԵԼ ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

*Հունվարի 28-ին Հայոց բանակի օրվա կապակցությամբ Ստեփանակերտի Ս. Աստվածամոր Հովանի մայր եկեղեցում կատարվել է Հանրապետական մաղթանքի կարգ: Մաղթանքից հետո Ստեփանակերտի եղբայրական գերեզմանոցում կատարվել է Հոգեհանգիստ՝ արցախյան գոյամարտի բոլոր նահատակների համար:*



Արցախի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության ներկայացուցիչներ՝ ռեկտոր Արմեն Սարգսյանի գլխավորությամբ, այսօր Ս. Աստվածամոր Հովանի մայր եկեղեցում կատարել են մոմավառություն՝ ի հիշատակ արցախյան պատերազմում անմահացած մեր հերոսների:

Համալսարանականներն այնուհետև երթով շարժվել են դեպի եղբայրական հուշահամալիր, ծաղիկներ խոնարհել՝ հարգելով հավերժի ճամփորդ դարձած տղաների հիշատակը:

# ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲՈՒՀ-ԴՊՐՈՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

*Բուհ-դպրոց համագործակցության շրջանակում ԱրՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի ֆինանսահաշվային ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Նարինե Ավանեսյանի նախաձեռնությամբ «Ֆինանսներ» մասնագիտությամբ սովորող 2-րդ, 3-րդ և 4-րդ կուրսերի ուսանողները հունվարի 18-ից 29-ը Ստեփանակերտի Վ. Ջահանգիրյանի անվան հ. 11 ավագ դպրոցում վարել են դասընթացներ:*



Նարինե Ավանեսյանի խոսքով՝ կազմակերպված դասընթացների շրջանակներում ուսանողները աշակերտներին ներկայացրել են բանկային համակարգին, ավանդներին ու վարկերին վերաբերող տեղեկատվություն, բանախոսությունների միջոցով նրանց ծանոթացրել գործող ֆինանսական համակարգին, ոլորտում մատուցվող ծառայություններին:

«Նման ձևաչափով միջոցառումների նպատակը նախ և առաջ ուսանողների ինքնուրույն հետազոտության հմտությունների զարգացմանը նպաստելն է, այդպիսով նրանք փորձ են ձեռք բերում, ինչպես նաև օժանդակում հանրակրթական դպրոցների ավագ դասարանների աշակերտների շրջանում ֆինանսական գրագիտության մակարդակի բարձրացմանը»,- նշել է ֆինանսահաշվային ամբիոնի պատասխանատուն:

«Ֆինանսներե» մասնագիտությամբ սովորող 2-րդ կուրսի ուսանողուհի Ռոմելլա Թամրազյանի խոսքով՝ նման դասընթացները ուսանողներին հնարավորություն են տալիս ինքնադրսևորվելու, ձեռք բերած գիտելիքները գործնական կիրառելու և նոր հմտություններ յուրացնելու:



# ԿԱՅԱՑԵԼ Է ԳԻՏԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐ



*Փետրվարի 22-ին ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնի նախաձեռնությամբ կազմակերպվել է գիտական սեմինար՝ նվիրված Մայրենի լեզվի միջազգային օրվան:*

«Այբուբենը պոեզիայում» խորագրով գիտական սեմինարը վարում էր գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնի դասախոս, բ.գ.դ., պրոֆեսոր, բանաստեղծ, ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ Սոկրատ Խանյանը:

Բանախոս Ս. Խանյանն անդրադարձել է պոեզիայում հայոց այբուբենի գեղարվեստական դրսևորումներին ու խորհրդին՝ շեշտադրելով հատկապես այբուբենի ծայրակապ-ակրոստիքոսի դրսևորումները հայ պոեզիայում՝ սկսած Դավթակ Քերթողից մինչև Պարույր Սևակ և մեր օրերի ստեղծագործողներ, ինչպես նաև Արցախի գրողներից Գուրգեն Գաբրիելյան և այլք:

Խոսելով գիտական սեմինարի նպատակի մասին՝ Ս. Խանյանը կարևորել է մայրենի լեզվի դերը՝ որպես ազգի գոյության և ինքնության պահպանման երաշխիք՝ ուսանողներին կոչ անելով Խաչատուր Աբովյանի՝ մայրենի լեզուն ամուր պահելու ցայսօր էլ արդիական պատգամը:

Գիտական սեմինարի ընթացքում մայրենի լեզվի մասին իրենց խոհերն են կիսել և ասմունքներով հանդես եկել նաև ուսանողները:

Գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնի վարիչ, բ.գ.թ. Նոնա Դավթյանը շնորհակալություն է հայտնել բանախոսին՝ կարևորելով Մայրենի լեզվի միջազգային օրն ու օրվա խորհրդին գիտական սեմինարի ձևաչափով անդրադառնալը:

«Արարչագործ մեր այբուբենը հուշում է, որ արարիչ Աստվածը Քրիստոսն է: Պաշտենք մեր այբուբենը և այն հավատքը, որը մեր արյան երթին է ձուլված»,-ընդգծել է Ն. Դավթյանը:

# ԱրՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՓՈՐՁՈՒՍՈՒՑՈՒՄ ԵՆ ԱՆՑՆՈՒՄ



*Փետրվարի 8-ից մարտի 6-ը ԱրՊՀ ավարտական խմբերի ուսանողներն անցնում են ամփոփիչ գնահատող ակտիվ փորձուսուցում:*

Մանկավարժական ուղղվածության մասնագիտությամբ սովորող ուսանողների փորձուսուցումն անց է կացվում Ստեփանակերտի համար 1, 2, 7, 8, 9,10,11 դպրոցներում:

Փետրվարի 19-ին ԱրՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Գեորգի Սահակյանը, փորձուսուցման բաժնի պետ Անուշ Հայրապետյանը, ֆակուլտետների դեկաններ շրջայց են կատարել դպրոցներում՝ ծանոթանալու փորձուսուցման ընթացքին և վեր հանելու առկա խնդիրները:

Անուշ Հայրապետյանի խոսքով՝ փորձուսուցումն անցնում է բնականոն հունով, բոլոր ուսանողները հիմնականում ներգրավված են, սակայն, իրավիճակի հետ կապված, այս տարի փոքր-ինչ տարբերվում է նախորդից այն առումով, որ որոշ ուսանողների հնարավորություն են ընձեռել փորձուսուցումն անցնել իրենց բնակության վայրերի դպրոցներում:

«Հարցումներ ենք իրականացրել ուսանողների և ուսուցիչների շրջանում, երկուստեք գոհունակություն են հայտնել փորձուսուցման ընթացքից և արդյունավետությունից՝ նշելով, որ ուսանողները հաջողությամբ կարողանում են իրենց ստացած տեսական գիտելիքները գործնականում կիրառել»,-նշել է Ա. Հայրապետյանը:

Այս օրերին փորձուսուցում են անցնում «Իրավագիտություն», «Թարգմանչական գործ», «Լրագրություն» և մանկավարժական ուղղվածության մասնագիտությամբ սովորող 4-րդ կուրսերի ուսանողները: